ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ

N 949-Ա/Ք « 11 » հուլիսի 2013 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14 կետի «դ» ենթակետը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշման 3-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում կատարվող փոփոխությունների լիազորությունները վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳ նախարարի
11 հուլիսի 2013 թ.
N 949-Ա/Ք հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ություն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտի գրավոր դիմումը՝ սոսնձված ծրարով, ներկայացնում է հետազոտական խմբի ղեկավարն անձամբ (աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, Օրբելի 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի 22):

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում (www.scs.am):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական արդյունքի առևտրայնացման և ինովացիոն ծրագրերի բաժնում աշխատանքային օրերին՝ ժամը 14:00 - 17:00, հեռ. 210 140 / 105:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության գիտության պետական կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳ նախարարի
11 հուլիսի 2013 թ.
N 949-Ա/Ք հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի (այսուհետ՝ Հայտ) մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 11-ի N 949-Ա/Ք հրամանի:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում, համաֆինանսավորման սկզբունքով, գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N1), կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 16 ամիս ժամկետով առավելագույնը 25 միլիոն դրամ կազմող դրամաշնորհներ կտրամադրի 5-7 (հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների դեպքում՝ 3-5) անձից բաղկացած հետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված գիտական թեմաներին (նախագծերին):

3. Խմբի (գիտական թեմայի) ղեկավար կարող է հանդիսանալ.

- գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ

կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ընդգրկված ամսագրերում հրատարակված առնվազն երեք հոդված կամ երկու հոդված և երկու արտոնագիր, կամ մեկ հոդված և չորս արտոնագիր, իսկ հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների դեպքում՝ վերջին հինգ տարիների ընթացքում ունի ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ընդգրկված ամսագրերում հրատարակված առնվազն 5 հոդված կամ 2 հոդված և ISBN ունեցող 1 մենագրություն (առնվազն 5 տպագրական մամուլ)՝ նվիրված որևէ գիտական թեմայի և երաշխավորված գիտական կազմակերպության (բուհի) գիտական (գիտատեխնիկական) Խորհրդի կողմից (մեկ հրատարակված մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում տպագրված երեք հոդվածին),

- գիտական աստիճան չունեցող անձը, ով ունի առնվազն տասը տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ, բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների ու ճարտարագիտության և տեխնոլոգիայի բնագավառների դեպքում՝ վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ընդգրկված ամսագրերում ունի առնվազն հինգ հոդված կամ չորս հոդված և երկու արտոնագիր, կամ երեք հոդված և չորս արտոնագիր, կամ երկու հոդված և վեց արտոնագիր, իսկ հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների դեպքում վերջին հինգ տարիների ընթացքում ունի ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ընդգրկված ամսագրերում հրատարակված առնվազն 10 հոդված կամ 7 հոդված և 1 մենագրություն, կամ 4 հոդված և 2 մենագրություն:

4. Խմբի բոլոր անդամները (այսուհետ՝ Կատարողներ) պետք է հանդիսանան ՀՀ մշտական բնակիչներ և գիտական թեմայի իրականացման ընթացքում պետք է բնակվեն Հայաստանում:

5. Խմբի ղեկավար չի կարող հանդիսանալ այն անձը, ով գտնվում է Խմբի անդամներից մեկի վարչական ենթակայության տակ:

6. Մրցույթի շրջանակներում որևէ անձ չի կարող ընդգրկվել մեկից ավելի Հայտերում, ինչպես նաև Մրցույթի արդյունքում ֆինանսավորվող մեկից ավելի գիտական թեմաներում:

7. Հայտը պետք է ներկայացվի գիտական թեմայի տեսքով և Հավելված N2-ին համապատասխան:

8. Մրցույթին ներկայացնելով հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև գիտական թեմայի իրականացման մասին հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Խմբի ղեկավարը պետք է գործի 2006 թ. հունիսի 15-ին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-142) սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

9. Պարտադիր պայման է Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ իրականացված հետազոտության արդյունքների հրապարակումը գիտական բաց պարբերականներում և ամսագրերում: Հետազոտությունների արդյունքները հրապարակելիս պարտադիր պետք է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին՝ նշելով գիտական թեմայի ծածկագիրը, օրինակ.

- Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS _____ գիտական թեմայի շրջանակներում:

- Исследование выполнено при финансовой поддержке ГКН МОН РА в рамках научного проекта № SCS _____.

- This work was supprted by State Committee Science MES RA, in frame of the research project № SCS _____

10. Պարտադիր պայման է Խմբի ղեկավարի համաձայնությունը՝ ֆինանսավորման երաշխավորված Հայտի և Հաշվետվության անոտացիաների՝ տպագիր կամ էլեկտրոնային եղանակով Կոմիտեի կողմից հրապարակման համար:

11. Ֆինանսական նախահաշիվը կազմելիս պետք է օգտվել Հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (Հավելված N3):

12. Հայտին պետք է կցել այն կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) Խորհրդի դրական կամ բացասական եզրակացությունը, որտեղ կատարվելու է գիտական թեման:

13. Հայտում Խմբի ղեկավարի ստորագրությունը պետք է լինի կազմակերպության գիտական քարտուղարի կամ ղեկավարի ստորագրությամբ հաստատված:

14. Հայտը պետք է ներկայացնել Մրցույթի մասին հայտարարության հրապարակման օրվանից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

15. Հայտը Կոմիտե պետք է ներկայացնել Խմբի ղեկավարի գրավոր դիմումով (Հավելված N4)՝ անձամբ (աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, Օրբելի 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի 22)՝ սոսնձված ծրարով:

16. Հայտը պետք է կազմված լինի հայերեն, A4 ձևաչափի թղթի վրա, 1.5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode, Sylfaen» տառատեսակով՝ պահպանելով աղյուսակների ամբողջականությունը: Էջերի բոլոր կողմերից պետք է թողնել 2.5 սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտը պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով, տպագրված և էլեկտրոնային (CD) տարբերակներով:

17. Խմբի անունից հանդես է գալիս միայն Խմբի ղեկավարը:

18. Համաֆինանսավորող կարող է հանդիսանալ հայաստանյան կամ օտարերկրյա իրավաբանական անձը, որը համաֆինանսավորումը կկատարի ոչ ՀՀ բյուջետային միջոցներից:

19. Համաֆինանսավորման մասնաբաժինը պետք է կազմի նախագծի ընդհանուր արժեքի առնվազն 25 տոկոսը:

20. Հայտը չի քննարկվի, եթե այն.

- լրացված է ոչ ճիշտ կամ ոչ ամբողջությամբ,
- ներկայացված է «zip» և այլ սեղմված (մի քանի փաստաթուղթ պարունակող) ձևաչափով,
- ուղարկված է ֆաքսով,
- նախկինում նույն ղեկավարի կողմից իրականացված գիտական թեմայի վերաբերյալ Հաշվետվություն չի ներկայացվել կամ դրա վերաբերյալ մասնագիտական փորձագիտական Խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,

- ամբողջությամբ կամ մասամբ կրկնում է գիտական կազմակերպության կամ հետազոտողների Խմբի կողմից նախկինում իրականացված կամ ներկայումս իրականացվող բազային ծրագիրը կամ գիտական թեման:

21. Հայտի նախահաշիվը պետք է արտացոլի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը:

22. Հայտերը բացվում են Մրցույթի մասին հայտարարության հրապարակման օրվանից հետո 30 օրացուցային օրերը լրանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը, ժամը 10:00-ին:

23. Հայտերը 5 աշխատանքային օրերի ընթացքում անցնում են տեխնիկական ստուգում:

24. Տեխնիկական ստուգում անցած Հայտերը տրամադրվում են մասնագիտական փորձագիտական Խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ), որը 30 օրացուցային օրվա ընթացքում իրականացնում է փորձաքննություն:

25. Փորձաքննության ժամանակ գնահատվում են Հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթն ու արդիականությունը Խմբի ղեկավարի և Կատարողների ձեռքբերումները գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորումը, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, նախահաշվի հիմնավորվածությունը, համաֆինանսավորման ծավալը (25 տոկոսից բարձր լինելու դեպքում) և շարժառիթները, առևտրայնացման հեռանկարը, ինչպես նաև գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

26. Կոմիտեն մինչև 2013 թվականի սեպտեմբերի 20-ը գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի համար, Հայտերի փորձաքննական գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհուրդ՝ քննարկման:

27. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

28. Կոմիտեի նախագահը, ելնելով ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների ֆինանսավորման ենթածրագրի հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը, որին հավասար

կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Կոմիտեի նախագահը հաստատում է գիտական թեմաների ցանկն ու դրանց ղեկավարների ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսական հատկացման չափը:

29. Կոմիտեն, գիտական կազմակերպության ղեկավարի միջոցով, տվյալ կազմակերպությունից ներկայացված Խմբերի (գիտական թեմաների) ղեկավարներին է տրամադրում Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականներն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի շեմային գնահատականը: Եթե Հայտը ներկայացվել է անհատական նախաձեռնությամբ, ապա վերջիններս անմիջականորեն տրամադրվում են Խմբի (գիտական թեմայի) ղեկավարին:

30. Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը և դրանց ղեկավարների ցուցակը տեղակայվում են Կոմիտեի պաշտոնական կայքում՝ www.scs.am:

31. Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել Խմբի (գիտական թեմայի) ղեկավարի կողմից՝ տեղեկանալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում Կոմիտե գրավոր դիմում ներկայացնելով:

32. Բողոքարկման դեպքում Հայտը Խորհրդի կողմից կրկնակի փորձաքննության է ենթարկվում: Կրկնակի փորձաքննության արդյունքներն ամփոփվում են Խմբի (գիտական թեմայի) ղեկավարի մասնակցությամբ:

33. Բողոքարկման արդյունքում տրվում է նոր վերջնական փորձագիտական գնահատական: Գիտական թեման երաշխավորվում է ֆինանսավորման, եթե դրա նոր վերջնական փորձագիտական գնահատականը գերազանցում է կամ հավասար է գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի համար սահմանված շեմային գնահատականին:

34. Հայտի կրկնակի գիտական փորձաքննության հիման վրա Կոմիտեի նախագահի որոշումը վերջնական է: Դրա մասին սահմանված կարգով տեղեկացվում է բողոքարկված գիտական թեմայի ղեկավարը:

35. ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) գիտական թեմայի ղեկավարի և Կատարողների միջև, ինչպես նաև գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և Խմբի (գիտական թեմայի) ղեկավարի միջև («Ծառայությունների մատուցման պայմանագիր»):

36. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Խմբի (գիտական թեմայի) ղեկավարի միջև 7-օրյա ժամկետում ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ 35 կետում նշված Պայմանագրերի առկայության դեպքում:

37. Ֆինանսավորման երաշխավորված նախագծի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից սկսվում է համաֆինանսավորման ամբողջ ծավալը փոխանցելուց հետո:

38. Համաֆինանսավորող կազմակերպության կողմից երաշխավորված գումարը Պայմանագրում նշված վերջնաժամկետում չփոխանցելու դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված. Կոմիտեի նախագահը հաստատված գիտական թեմաների ցանկում ու դրանց ղեկավարների ցուցակում կատարում է փոփոխություն՝ երաշխավորված, սակայն չֆինանսավորված հաջորդ գիտական թեմայի (թեմաների) ֆինանսավորման մասին:

Հավելված N 1
Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված
գիտական թեմայի Հայտի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավագիտություն

5.6. Քաղաքագիտություն

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

6.6. Այլ հումանիտար գիտություններ

Հավելված N 2
Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված
գիտական թեմայի Հայտի

ՀԱՅՏ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ

I. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Նախագծի անվանումը[1]

Բնագավառը և մասնագիտությունն ըստ համապատասխան դասիչների (Հավելված N 1)	

Իրականացման ժամկետը (ամիս)	
Հիմնական կատարողների թիվը	
Պահանջվող ֆինանսավորման ծավալը (նախագծի ընդհանուր արժեքը)	հազ. դրամ
Երաշխավորվող համաֆինանսավորման ծավալը	հազ. դրամ

Նախագծի ղեկավարի տվյալները

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Գիտական աստիճանը	
Պաշտոնը	
Հեռախոսը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	

[1] *Դատարկ դաշտերը նախատեսված են տեքստը շարադրելու համար:*

Կազմակերպության տվյալները

Գերատեսչությունը	
Կազմակերպության լրիվ անվանումը և կազմակերպաիրավական ձևը	
Հասցեն	
Հեռախոսը	
Ֆաքսը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	
Կայք էջը	
Կազմակերպության ղեկավարի Ա.Ա.Հ.	
Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը	

II. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անվանումը

Բնագավառը

Համառոտ բնութագիրը (անոտացիա, մինչև 0.5 էջ)

Բանալի բառերը (մինչև 10 բառ)

Ընդհանուր բնութագիրը (մինչև 1.5 էջ)

Նպատակը և խնդիրները (մինչև 1 էջ)

Արդիականությունը (մինչև 1 էջ)

Գիտատեխնիկական հենքը[2] (մինչև 5 էջ)

Նախագծի կատարողների ձեռքբերումները

[2] *Ներկայացնել նախագծի գիտական կամ գիտատեխնիկական բաղադրիչի բովանդակությունը, հիմնավորել իրականացվելիք կիրառական (գիտատեխնիկական, փորձակոնստրուկտորական կամ փորձատեխնոլոգիական) խնդիր(ներ)ի կարևորությունը, ինչպես նաև նախագծի իրականացման ճանապարհները և նպատակ(ներ)ին հասնելու համար անհրաժեշտ կատարողների կազմը, նկարագրել նախագծի իրականացման համար առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, կատարողների՝ տվյալ ուղղությամբ ձեռքբերումները:*

Ակնկալվող արդյունքը[3]

☐ տեխնոլոգիա

☐ ծրագրային փաթեթ, ալգորիթմ կամ բլոկ սխեմա

☐ մոդել

☐ փորձնական կամ լաբորատոր նմուշ

☐ նախատիպ

☐ այլ (լրացնել հաջորդող դաշտում)

Ակնկալվող արդյունքի՝

1. տեխնիկական ցուցանիշները

2. կիրառության բնագավառները

3. նորույթի բնութագիրը

☐ նմանօրինակներ (անալոգներ)

☐ այլ

Նախագծի մշակվածության ներկա փուլը

☐ կոնցեպցիա

☐ գիտահետազոտական աշխատանք

☐ փորձակոնստրուկտորական աշխատանք

☐ փորձատեխնոլոգիական աշխատանք

☐ այլ (լրացնել հաջորդող վանդակում)

[3] *Վանդակը նշելու համար վրան երկու հպում (click) անել և բացված "Check Box Form Field Options" պատուհանում ընտրել "Checked" շրջանակն ու սեղմել OK կոճակը:*

Նմանօրինակների հետ համեմատության ցուցանիշները՝

հիմնական տեխնիկական առավելությունները / ցուցանիշները

հիմնական տնտեսական առավելությունները / ցուցանիշները

հիմնական բնապահպանական առավելությունները / ցուցանիշները

այլ

III. ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ[4]

Ի՞նչ ծավալի ֆինանսավորում է անհրաժեշտ ներդրումային ծախսերի համար:	հազ. դրամ
Ի՞նչ ժամանակահատվածում է հնարավոր հասնել ծախսածածկման:	ամիս
Քանի՞ աշխատատեղ կարող է ստեղծվել:	
Ո՞վ կարող է լինել արդյունքի հնարավոր սպառողը:	
Սպառողի ո՞ր պահանջմունքները կբավարարվեն:	
Ի՞նչ մասնագետներ են անհրաժեշտ նախատեսվող արդյունքի առևտրայնացման համար:	
Ինչո՞ւ նախատեսվող բիզնեսը կարող է լինել շահութաբեր:	
Ինչպիսի՞ այլ տնտեսական արդյունք կարող է գրանցվել:	

[4] *Լրացվում է համապատասխան տվյալների առկայության դեպքում:*

IV. ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ազգանունը, անունը, հայրանունը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը	
Հրատարակված գիտական հոդվածների քանակը	
Հրատարակված մենագրությունների քանակը	
Արտոնագրերի քանակը, այդ թվում՝ գործող	
Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)	
Վերջին 5 տարում ստացած դրամաշնորհները (նշել վերնագիրը, որտեղից է ստացվել, ժամկետը, ֆինանսավորման ծավալները)	

«____» _____ 2013թ. _____

(ղեկավարի ստորագրությունը)

V. ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կազմակերպության լրիվ անվանումը	
Հասցեն	
Հեռախոսը	
Ֆաքսը	
Էլ-հասցեն	
Կայք էջը	
Կոնտակտային անձի Ա.Ա.Հ.	
Հեռախոսը	
Կազմակերպության ղեկավարի Ա.Ա.Հ.	
Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը	

VI. ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[5]

Համաֆինանսավորելու շարժառիթները, ակնկալիքներն իրականացման արդյունքներից (մինչև 1 էջ)

Երաշխավորվող համաֆինանսավորման ծավալը	հազ. դրամ

Կազմակերպության ղեկավար _____(Ա.Ա.Հ.)

_____

(ստորագրություն)

[5] *Լրացվում է համաֆինանսավորող կազմակերպության կողմից:*

VII. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ծննդյան տարեթիվը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (աշխատանքային, բնակարան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Գրանցված մտավոր սեփականությունը	

VIII. ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ[6]

[6] *Ներկայացնել նախատեսվող հետազոտությունների ուղղությամբ նախագծի մասնակիցների կողմից վերջին հինգ տարիներին հրատարակած աշխատությունները (գիտական հրապարակումներ, արտոնագրեր, գիտաժողովների զեկույցներ, ներդրումներ և այլ նյութեր)՝ նշելով հեղինակին (հեղինակներին), վերնագիրը, ամսագիրը կամ հրատարակությունը, տարին, հատորը, համարը, էջերը: Արտոնագրի դեպքում նշել հեղինակին, երկիրը, դասիչը, անվանումը, սեփականատիրոջը, ժամկետը: Այլ հրապարակումները ներկայացնել ընդունված պահանջներին համապատասխան:*

IX. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ[7]

Նախագծի անվանումը _____

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ((ներառյալ եկամտային հարկը, հազար դրամ)							
2013				2014			
Ազգանուն, անուն, հայրանուն	Անվանում	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը	Ազգանուն, անուն,հայրանուն	Անվանում	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ							

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում		
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (թվարկել 120000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել նախահաշվի մեկնաբանության մեջ)	2013	2014
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)		
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր		
2) տեղական գործուղումների օրապահիկ		
3) տեղական գործուղումների գիշերավարձ		
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր		
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ		
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ		
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		

3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել նախահաշվի մեկնաբանության մեջ)						
Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար						
	2013			2014		
Անուն, ազգանուն, հայրանուն	Օրավարձ	Օրեր	Գումարը, հազ. դրամ	Օրավարձ	Օրեր	Գումարը, հազ. դրամ
1)						
2)						
3)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

[7] *Լրացնել առաջնորդվելով Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծի Հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցով (Հավելված N3):*

Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ (Թվարկել 120 000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)	2013	2014
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ		
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)		

Կազմակերպության ղեկավար _____(Ա.Ա.Հ.)

_____

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ (Ա.Ա.Հ

_____ (ստորագրություն)

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ[8]

[8] *Բացատրել և հիմնավորել ֆինանսական նախահաշվի 120 000 դրամը գերազանցող բոլոր կետերը:*

Հավելված N 3
Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված
գիտական թեմայի Հայտի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ ԿԱԶՄԵԼՈՒ

1. Ֆինանսական նախահաշիվը պետք է ներկայացնել առանձին տարիների համար՝ պահպանելով ընդհանուր գումարի միևնույն չափը:
2. Ֆինանսական նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս պետք է Կատարողների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող գումարը չպետք է գերազանցի առաջին տարվա ամբողջ գումարի 20 (հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների դեպքում՝ 25) տոկոսը, իսկ երկրորդ տարվա ամբողջ գումարի 60 (հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների դեպքում՝ 75) տոկոսը:
4. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող այլ նյութերի ձեռքբերման ծախսեր: 120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամը գերազանցող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ:
5. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա գիտական միջոցառումներին մասնակցելու համար: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը պետք է հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ: Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը պետք է հաշվարկել ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար նախագծի հիմնական

կատարողները կարող են հայցել ամսական մինչև 1 500 (հազար հինգ հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ընդ որում՝ տարեկան կտրվածքով օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը:

6. Փորձարարական բնույթի թեմաների համար ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող է նախատեսվել ենթապայմանագրային համագործակցություն. տվյալ գիտական թեմայի իրականացման համար որոշակի գումար կարող է հատկացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Ենթապայմանագրային համագործակցության դեպքում Խմբի ղեկավարը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ պետք է կնքի պայմանագիր և այն համաձայնեցնի Կոմիտեի հետ:

7. Ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ յուրաքանչյուր ենթապայմանագրային համագործակցության համար պետք է ներկայացնել առանձին հիմնավորում:

8. Համաֆինանսավորող կազմակերպության հետ ենթապայմանագրային համագործակցության գումարը չպետք է գերազանցի Նախագծի ընդհանուր արժեքի 10 տոկոսը:

9. Նյութերի ձեռք բերման համար նախատեսված գումարը չպետք է գերազանցի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 20 տոկոսը:

10. Ֆինանսական նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում են գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված ֆինանսական միջոցները, որոնցով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն դրամաշնորհի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 10 տոկոսը:

11. Նախագծի իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ նախագծի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարը, Կոմիտեի համաձայնությամբ, կարող է վերաբաշխվել տարեկան մեկ անգամ՝ չգերազանցելով նրա 10 տոկոսի չափը:

Հավելված N 4
Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված
գիտական թեմայի Հայտի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացնում եմ

« _____

_____»

վերնագրով նախագիծը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____ 2013թ.